

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- Գործուղված անձ՝** Գայանե Սերոբյան
- Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի խորհրդական
- Գործուղման վայրը՝** Էստոնիայի Հանրապետություն, քաղաք Տալլին
- Գործուղման ժամկետները՝** 2019թ. փետրվարի 6-8-ը

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն ՀՀ արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանի գլխավորած պաշտոնական այցին Տալլին (Էստոնիա), որի շրջանակներում նախատեսված էին նաև հանդիպումներ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական և մասնավոր կազմակերպությունների հետ՝ տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների, ինչպես նաև թվայնացման ոլորտում հայ-էստոնական համագործակցության հնարավորությունների բացահայտման և քննարկման նպատակով:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Օր/Ժամ	Վայր	Հանդիպման մասնակիցներ
07.02.2019 09:30-14:00	eEstonia ցուցասրահ	Դորիս Պոլդ՝ Էստոնիայի ՏՏ և հեռահաղորդակցական ընկերությունների ասոցացիա, Estonian ICT Cluster-ի կառավարիչ Տոնիս Նիրկ՝ Էստոնիայի ԱԳՆ թվային հարցերով դեսպան ՏՏ ոլորտի ընկերություններ Սիքյուրիթի սոֆթուեյր Պրոտեքսպերտ Լեվիրա Վոտեմո Ռաուլոլոյթերս
15:00-15:30	Enterprise Estonia, e-Residency	Օտտ Վատտեր՝ նախագծի կառավարիչ
08.02.2019 08:40-09:15	Սուխոհոթել, ԱլԳ 6-րդ ամենամյա համաժողով, Տալլին	Յուրի Ռատաս՝ Էստոնիայի Հանրապետության վարչապետ

09:30-10:30	Տեղեկատվական համակարգերի գերատեսչություն, տվյալների փոխանակման պետական ղեկարտամենտ	Պիրետ Ուրբ՝ միջազգային կապերի բաժնի ղեկավար Յուրգեն Սուվալով՝ x-road ավագ փորձագետ, պրոդուկտի ղեկավար
11:00-11:45	Տնտեսական հարցերի և կապի նախարարություն, պետական տեղեկատվական համակարգերի ղեկարտամենտ	Սանդրա Սարավ՝ գլոբալ հարցերով տնօրեն Կադի Ավինգո՝ թվայնացման հարցերով խորհրդատու
19:00-19:30		Կաի Կառելսոն՝ Էստոնիայի Հանրապետության ղեսպանը Վրաստանում և Հայաստանում

Հանդիպումներ	Քննարկված հարցեր	Արդյունքներ
eEstonia ցուցասրահ	<p>1. Յուգոսլավիայում հայկական պատվիրակությունը ընդհանուր գծերով ներկայացվեցին Էստոնիայի թվային հասարակության կառուցման ընթացքը և ձեռքբերումները, մասնավորապես այն անվտանգ և թափանցիկ թվային էկոհամակարգը, որը և դարձել է ի-Էստոնիա բրենդ: Մասնավորապես, ներկայացման մեջ անդրադարձ եղավ՝ ա/ ի-Կառավարման համակարգին, որը ներդրվել է 1997թ. և այսօր արդեն հանրային ծառայությունների 99% հասանելի են քաղաքացիներին ի-ծառայությունների տեսքով, բացառությամբ՝ ամուսնության գրանցումը և անշարժ գույքի վաճառքը: Սա նշանակում է, որ դեպքերի գերակշիռ մասով քաղաքացիները կարիք չունեն հանրային ծառայությունների համար դիմելու և այդ ծառայություններից օգտվելու համար ֆիզիկապես ներկայանալ տվյալ ծառայության համար պատասխանատու կառույց: Սա մեծապես մեծացրել է ծառայությունների արդյունավետությունը դրանց վրա ծախսվող ժամանակի իմաստով, ինչպես նաև հնարավորություն է տվել ամբողջովին հրաժարվել թղթավարությունից/թղթերի շրջանառությունից և կրճատել պետական հատվածում ծառայողների քանակը: Համակարգը ներդնելիս հատուկ ուշադրություն է դարձվել անհատական տվյալների անվտանգությանը և պաշտպանվածությանը: Արդյունքում կարևոր առանձնահատկություններից մեկը համակարգի այն է, որ նույն անձի վերաբերյալ տվյալները կուտակված չեն մեկ սերվերի վրա այլ բաշխված են տարբերի սերվերների մեջ: Այսպես՝ եթե որևէ մեկին հաջողվի կոտրել սերվերներից որևէ մեկը և հասանելիություն ստանալ տվյալ սերվերի վրա պահված տվյալներին, ապա նա կտեսնի միայն ենթադրենք, անուն ազգանունների ցանկ, կամ միայն հասցեների ցանկ, կամ միայն ծննդյան տվյալներ և այդպես շարունակ: Սա հնարավոր է եղել իրագործել նրա շնորհիվ, որ տվյալները, ոչ թե սկանավորվել են և ստեղծվել են թվային փաստաթղթերի արխիվներ, այլ մուտքագրվել են յուրաքանչյուր տվյալի համար նախատեսված առանձին թվային դաշտում (digitization v.s. digitalization. Digitized data is machine readable, whereas digilatized documents are not machine readable): Այդպիսով</p>	

վերջինը չի կարող նույնականացնել հասցեն որևէ անձի հետ: Նաև համակարգը հնարավորություն է տալիս, որ անձը մշտապես տեղեկացված լինի, թե ով, երբ և ինչ նպատակով կամ ինչ հարցով է դիմել իր տվյալները ստանալու համար: Ընդ որում տվյալները անձի վերաբերյալ երբեք ամբողջական չեն տրամադրվում այլ միայն հարցում անող կողմի իրավասության շրջանակներում և տվյալը իմանալու անհրաժեշտությամբ պայմանավորված: Օրինակ՝ ավտոբուսային ընկերությունը կարիք ունի իմանալու, թե արդյոք անձը բնակվում է Տալլինում, թե ոչ, քանի որ Տալլինի բնակիչների համար երթևեկությունը ավճար է և վերջինը իր հարցին ստանում է միայն այո կամ ոչ պատասխանը և ոչ երբեք տվյալ անձի ճշգրիտ հասցեն: Անհատական տվյալների պաշտպանվածությունը այն կարևոր երաշխիքն է եղել, որ էստոնացիները անվերապահովեն վստահում են հանրային կառավարման ի-լուծումներին: Այնուամենայնիվ բոլոր ծառայությունները առկա են և մատուցվում են նաև ֆիզիկապես՝ այն քաղաքացիների համար, ովքեր չեն վստահում թվային լուծումներին:

բ/ 2000թ-ից ներդրվել է e-Tax համակարգը,

գ/ 2001-ից՝ X -Road-ը, որը մի անտեսանելի, սակայն առանցքային հարթակ է, որը միմյանց կապում է երկրի է-ծառայությունների տարբեր դատաբազաներ, ինչպես պետական այնպես էլ մասնավոր հատվածներից (յուրաքանչյուր մասնավոր ընկերություն հնարավորություն ունի միանալու X -Road-ին, իհարկե դրա համար որոշակի չափանիշներին բավարարելու, և պայմանների առկայության դեպքում, ինչպես օրինակ՝ տեղեկատվության անվտանգության հարցերով առանձին աշխատակից /ներ/ պետք է ունենա ընկերությունը և այլն) և հնարավորություն է տալիս ներդաշնակ փոխգործակցության համար 24/7 ռեժիմով:

դ/ Թվային հասարակության և թվային տնտեսության ռեալիզացման կարևորագույն ատրիբուտներից մեկն էլ թվային նույնականացման գործիքներն են /ID-card, Mobile-ID, Smart-ID/, որոնք էստոնիայում ներդրվել են և լիարժեք կիրառվում են 2002թ.-ից: Մոտ 1.3 մլն քաղաքացի ունի և կիրառում է այս միջոցները է-ծառայություններից

	<p>օգտվելու համար անկախ նրանից, թե խոսքը գնում է բանկային կամ բիզնես գործարքների ու գործառույթների, թե փաստաթղթեր ստորագրելու կամ բժշկական խորհրդատվություն ստանալու մասին:</p> <p>ե/ Շնորհիվ թվային նույնականացման միջոցների նման լայնամասշտաբ տարածման ստացել է ապահով և անվտանգ թվային նույնականացման միջոցները, 2005թ-ից Էստոնացիները, աշխարհում առաջինը, հնարավորություն ստացան էլեկտրոնային քվեարկություն իրականացնելու համար: Սա ընդամենը 3 թույլտվություն գործընթաց է քաղաքացիների համար, որի համար անհրաժեշտ է ունենալ միայն ինտերնետին միացած համակարգիչ, անկախ նրանից, թե աշխարհի որ անկյունում է գտնվում անձը: Այստեղ ևս հաշվի են առնվել բոլոր հնարավոր ռիսկերը, ինչպես օրինակ՝ իսկ ինչ եթե քաղաքացուն ընտրատեղամասից դուրս, որևէ անվերահսկելի վայրում ստիպեն քվեարկել այս կամ այն կերպ: Սրա համար, օրինակ քվեարկության պրոցեսը 10 օր շարունակ վավեր է և անձը հնարավորություն ունի այդ ժամանակահատվածում փոխել իր քվեարկությունը:</p> <p>2. Ցուցարահում ներկայացումների երկրորդ մասը նվիրված էր տեխնոլոգիական ստարթ-ափ էկոհամակարգին և այս մասով իրենց ծրագրերի և նախաձեռնությունների մասին խոսեցին Estonian ICT Cluster-ի մենեջերը և մի շարք ընտրված SS ընկերություններ: Այս մասում հատկապես հետաքրքրական էին Estonian ICT Cluster-ի կողմից մատուցվող ծառայությունները արտահանման խթանման և կրթության և ուսուցման ոլորտներում: Ծառայություններ, որ առաջարկվում են ոչ միայն Էստոնական ընկերություններին, այլ նաև այլ երկրներին՝ զարգացմանն ուղղված համագործակցության ծրագրերի շրջանակներում: Օրինակ՝ Վրաստանում օգնում են SS ոլորտի ընկերություններին համախմբվել և ստեղծել ասոցացիա, ինչպես նաև փորձում են զարգացնել վրացական և էստոնական ստարթափների միջև համագործակցություն և համատեղ նախագծեր և համատեղ արտահանում դեպի այլ շուկաներ: Համագործակցության շրջանակներում սովորեցնում են, թե</p>	<p>ICT Cluster-ի մենեջերի հետ առանձին երկկողմ զրույցի ընթացքում ձեռք բերվեց համաձայնություն փոխանակել առավել մանրամասն ինֆորմացիա նրանց՝ Վրաստանում իրականացվող ծրագրի վերաբերյալ և քննարկել, թե ինչպես հետագայում հնարավոր կլինի մեծացնել այդ համագործակցությունը՝ դարձնելով այն տարածաշրջանային և/կամ կրկնել նույն փորձը Հայաստանում: Քանի որ Վրաստանում իրականացվող ծրագիրը իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ GmbH) տեխնիկական աջակցությամբ, ապա հնարավոր է քննարկել նույն գործընկերոջ հետ</p>
--	---	---

	<p>պրոդուկտների/ծառայությունների փաթեթավորում և բրենդավորում և տրամադրում են խորհրդատվություն կրթության ոլորտում մասնավոր հատվածի մասնակցության վերաբերյալ:</p> <p>3. e-Residency համակարգը հատկապես հետաքրքրական էր, քանի որ նմանատիպ գործիքի/լուծման կիրառումը Հայաստանում կարող է մի կողմից դառնալ հարթակ, որը հնարավորություն կտա աշխարհասփյուռ հայերին առանց Հայաստան տեղափոխվելու հիմնել և վարել իրենց բիզնեսը Հայաստանում, այդպիսով կապելով իրար հայկական գործարար աշխարհը ամբողջ աշխարհից, մյուս կողմից՝ այն կարող է հետաքրքիր լինել ոչ միայն հայերի համար այլ նաև այլ երկրների քաղաքացիների համար, ովքեր փնտրում են հնարավորություններ ստեղծելու և/կամ ընդլայնելու իրենց բիզնեսը ԵԱՏՄ տարածքում:</p> <p>Ներդնելով այս լուծումը Էստոնիան ստեղծել է տրանսնացիոնալ թվային ինքնություն, որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր անձի, անկախ իր քաղաքացիությունից և գտնվելու վայրից, հեշտությամբ սկսել բիզնես ԵՄ տարածքում և վարել այն գլոբալ մասշտաբներով: Դրա համար անձը ստանում է թվային ID և դրանով իսկ լիարժեք հասանելիություն էստոնիայի թվային ծառայություններին: e-Resident-ի թվային ID քարտը սակայն չի հանդիսանում երկրի մուտքի արտոնագիր: Էստոնիա մուտք գործելու համար e-Resident-ները պետք է անցնեն վիզա ստանալու սովորական ընթացակարգով: Այս համակարգի նրեդրման արդյունքում և դրա միջոցով Էստոնիան գեներացրել է 10մլն եվրոյից ավել մուտքեր երկրի բյուջեն, որը ներառում է հարկերը և հարկային խորհրդատվական ծառայությունների դիմաց վճարները:</p> <p>4. ԱլԳ 6-րդ ամենամյա համաժողովին նախորդած Էստոնիայի Հանրապետության վարչապետի և ՀՀ արտաքին գործերի նախարարի միջև երկկողմ հանդիպման ընթացքում վերջինս խոսեց Հայաստանի SS և բարձր տեխնոլոգիաների ոլորտի ձեռքբերումների մասին և տեղեկացվեց Հայաստանում 2019-ին կայանալիք Տեղեկատվական տեխնոլոգիաների</p>	<p>ծրագիրը նաև Հայաստանում իրագործելու հարցը:</p> <p>Նախագծի մենեջերը նշեց, որ իրենք պատրաստակամ են տրամադրել խորհրդատվություն e-Residency համակարգը կամ դրա առանձին տարրեր Հայաստանում ևս զարգացնելու, փորձարկելու և ներդնելու ուղղությամբ: Միևնույն ժամանակ հստակեցվեց, որ դա կպահանջի օրենսդրական անհրաժեշտ հիմքերի ստեղծումը, բանկային հատվածում գործընկերների հետ քննարկումներ և համաձայնություններ է-ռեգիդենտներին բանկային հաշիվների տրամադրման հարցերի վերաբերյալ:</p> <p>Էստոնիայի վարչապետը հետաքրքրվեց այդ միջոցառումով և առաջարկեց, որ կողմերը միասին մտածեն այդ մեծ համաժողովի շրջանակներում թվային հարցերով ֆորում կազմակերպելու և անցկացնելու հարցը: Միևնույն ժամանակ նշեց, որ WCIT-ն լավ</p>
--	---	--

	<p>համաշխարհային համաժողովի մասին՝ ընդգծելով, որ դա կարող է լինել նպաստավոր հարթակ Էստոնիայի համար ներկայացնելու թվային հասարակության իրենց երկրի մոդելը:</p> <p>5. Տեղեկատվական համակարգերի պետական լիազոր մարմնում մանրամասն ներկայացվեց X-Road գործիքը: Հատկապես կարևոր էր այն փաստը, որ համակարգին միանալը պարտադիր է այն կառուցների համար, որոնք տիրապետում են և օգտագործում են հանրային տեղեկատվական համակարգեր, ինչը կարգովորված է օրենքով:</p> <p>6. Տնտեսական հարցերի և կապի նախարարությունում հանդիպումը օգնեց հասկանալ, նախարարության մանդատը և գործառույթները երկրի թվային օրակարգի մշակման և իրականացման գործընթացում, կիբերանվտանգության հարցերում, տարբեր նախարարությունների կողմից թվայնացման նախագծերի հաստատման և ֆինանսավորման վերաբերյալ որոշու կայացնելու գործում, թվային և SS հնտությունների պլանավորման և զարգացման գործում:</p>	<p>առիթ կարող է լինել իր համար՝ Հայաստան այցելելու համար, որտեղ ինքը երբեք չի եղել:</p> <p>Հայաստանում X-Road-ին համարժեք հարթակ կամ դրա հիմքերը ստեղծվում են ներկայումս ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող մի ծրագրի կողմից, որի ընթացքը և արդյունքները չեն գոհացնում՝ համաձայն ԷԿԵՆԳԻ տնօրենի տեղակալ Անդրանիկ Ղուկասյանի տրամադրած տեղեկության և Հայաստանը հետաքրքրված է ստանալ Էստոնացիներից տեխնիկական խորհրդատվություն X-Road-ի ներդրման վերաբերյալ:</p> <p>Էստոնական կողմի ներկայացուցիչները պատրաստակամություն հայտնեցին հետագայում ևս տրամադրել հետաքրքրող տեղեկատվություն և քննարկել զարգացմանն ուղղված համագործակցության երկկողմ կամ եռակողմ նախագծերի հնարավորությունները է-կառավարման լուծումների, թվային օրակարգի զարգացման ոլորտում:</p>
--	---	--

Ստորագրություն

**Գայանե Սերոբյան, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի խորհրդական
15.02.2019թ.**